

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ ԻՆչ Ե պետք իմանալ

Վիրուսն այս պահին տարածված չէ ո՛չ Լոս Անջելես շրջանի համայնքում, ո՛չ Էլ Միացյալ Նահանգներում: Լոս Անջելես շրջանի հասարակությանը սպառնացող անմիջական վտանգը ցածր է:

Հանրային առողջապահության վարչությունը ուշադրությամբ գնահատում է այս իրավիճակն ու զարգացումները:

Ինչպե՞ս է այն տարածվում:



Օդակաթիլային ճանապարհով, երբ վարակված մարդը հագում կամ փռչտում է



Անձնական սերտ շփում, ինչպես, օրինակ, հիվանդ մարդու խնամք


Նոր կորոնավիրուսը նոր տեսակի վիրուս է, որով վերջերս սկսել են վարակվել մարդիկ: Դրա տարածումը սկսել է Չինաստանում, բայց հիմա արդեն վարակված մարդիկ կան նաև այլ երկրներում: Ներկայիս գիտելիքները մեծապես հիմնված են նմանատիպ կորոնավիրուսների մասին ունեցած գիտելիքների վրա:

Քանի որ վիրուսը նոր է, մենք դրա մասին ամեն օր ավելի շատ ինֆորմացիա ենք ստանում:

Որո՞նք են ախտանիշները:



Ջերմություն



Հազ



Դժվարությամբ շնչել



Ծանր հիվանդություն

Ի՞նչ կարող եմ անել ինձ և այլ մարդկանց պաշտպանելու շնչառական հիվանդություններից, ինչպիսին, օրինակ, նոր կորոնավիրուսն է:

- Հիվանդ ժամանակ մնացեք տանը:
- Սահմանափակեք սերտ շփումը հիվանդ մարդկանց հետ:
- Ձեռքերը հաճախակի լվացեք ջրով ու օճառով առնվազն 20 վայրկյան:
- Եթե ձեռքի տակ չկա օճառ ու ջուր, օգտագործեք սպիրտային հիմքով ձեռքերի լվացման միջոց, որը պարունակում է առնվազն 60% սպիրտ:
- Մաքրեք և ախտահանեք այն առարկաներն ու մակերևույթները, որոնց հաճախ եք դիպչում:
- Խուսափեք Ձեր աչքերին, քթին ու բերանին դիպչելուց:
- Հազալիս ծածկեք Ձեր բերանը, իսկ փռչտալիս օգտագործեք անձեռոցիկ, ապա անձեռոցիկը նետեք աղբամանը: Եթե անձեռոցիկ չունեք ձեր թևը օգտագործեք (ոչ ձեր ձեռքերը):
- Դիմակներն առավելագույնս արդյունավետ են, երբ պատշաճ կերպով օգտագործվում են առողջապահության աշխատակիցների և հիվանդ մարդկանց կողմից:
- Ստացեք գրիպի պատվաստում, եթե այս սեզոնին դեռևս չեք ստացել: